եհան մինչեւ 5000 Ֆլորին, եւ ժողովեալ զմիաբանս իւր կատարեաց զնաւակատիս նորին հոգեւոր ուրախութեամբ, և յայնմհետէ միաբանք Հայոց 'ի սոյն տեղւոջ կատարէին զպաշտամունս իւրեանց։ Արդ՝ շինեցաւ եկեղեցին վերնատան 'ի թուին Հայոց ՊԶԸ. (1439)։ Հաննա վարդապետն ականատես պատմէ զարձանագրութիւնս Մարտիրոս Պատրիարքի 'ի Վերնատան անդ, ագուցեալ յորմն. Տե՛ս Պոպ. Երուսաղէմ, երես 225. այլ այժմ արձանագիրն այն չերեւի 'ի միջի, զի եղծեալ ապականեցաւ 'ի հրդեհին պատահելոյ 1808. այլ յետոյ 'ի բռնութենէ Ցունաց և անհոգանալոյ մերոց, ոչ եդին զայն 'ի տեղւոջ իւրում։

Արդ թէպէտ և Վիրք հասուցին բազում չարիս, և առիթ եղեն մեծամեծ վնասուց և ազգի ազգի նեղութեանց ազգին Հայոց, առին զԳողգոթայն, զվերին և զներքին սենեակն ամենայն պարագայիւք, և զրկեցին զնոսա 'ի հայրենի ժառանգութենէ, այլ ոչ ընդ երկար վայելեցին և ինքեանք, զի զկնի իբր քառասուն ամաց Լատինք բռնի հանին զմիմսան 'ի ձեռաց նոցա, այն է Տարածման տեղին, զորմէ յետոյ. և է ցարդ 'ի ձեռս նոցա։

Եւ զկնի ժամանակաց Վիրք իսպառ մերժեցան և անհետացան, և անուանք նոցա ջնջեցան 'ի տահմանաց Ս. երկրին. բարեյորդոր խրատիւք եկեղեցականացն Ցունաց. Գողգոթայն, վանօրայք նոցին, բովանդակ կալուածք այդիք և ծառատունկք, այլոքն հանդերձ անկան 'ի ձեռս Ցունաց, պատրուակաւ կրօնակցութեան իւրեանց, և նոքա տիրեն մինչեւ ցայսօր ժամանակի։

ԳԼՈՒԽ ԼԳ.

Մէլիք Զահր. զոր ինչ արար յԵրուսաղէմ։ Արարացի արձանագրութիւն Ս. Յակոբայ։ Վերելք սանդուխքն Վերնատան 'ի Ս. Յարութեան։ Վէճ Վրաց վասն Ս. Յակոբայ։ Նայի Պատրիարք։

ՅԱՒՈՒՐՍ Սուլթանին Եգիպտոսի Մէլիք Զահր Ապու Սայիտ Զաղմադայ. զորմէ բազում բանք եղեն յընթացս գործոյս։ Յաւուրս սորա անկաւ կայծակն 'ի մզկիթն Օմա-